

1

Պօղոս՝ Յիսուս Զրիստոսի բանտարկեալը, եւ Տիմոթէոս եղբայրը, Փիլիմոնի՝ մեր սիրելիին ու գործակիցին, 2 Ապփիա սիրելիին, Արքիպպոսի՝ մեր զինակիցին, ու քու տանդ մէջ հաւաքուող եկեղեցիին. 3 շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Զրիստոսէ:

ՓԻԼԻՄՈՆԻ ՍԷՐՆ ՈՒ ՀԱԻԱՏՔԸ

4 Ծնորհակալ կ'ըլլամ իմ Աստուծմէս՝ ամէն ատեն յիշելով քեզ իմ աղօթքներու մէջ, 5 երբ կը լսեմ քու սիրոյդ եւ հաւատքիդ մասին՝ որ ունիս Տէր Յիսուսի ու բոլոր սուրբերուն հանդէպ, 6 որպէսզի քու հաւատքիդ հաղորդակցութիւնը արդիւնաւոր ըլլայ՝ Զրիստոս Յիսուսով՝ ձեր մէջ եղած ամէն բարիքի գիտակցութեամբ: 7 Զանի որ մեծ ուրախութիւն եւ մխիթարութիւն ունինք քու սիրոյդ համար, որովհետեւ սուրբերուն Քսիրտը քեզմով հանգստացած է, եղբայր:

ԽՆԴՐԱՆՔ ՈՆԵՍԻՄՈՍԻ ՀԱՄԱՐ

8 Ուստի, թէպէտ Զրիստոսով շատ համարձակութիւն ունիմ հրամայելու քեզի ինչ որ պատշաճ է, 9 փոխարէնը կ'աղաչեմ՝ սիրոյ համար, ըլլալով այնպիսի մէկը, ինչպէս եմ ես՝ Պօղոս, ծերացած, եւ հիմա՝ նաեւ Յիսուս Զրիստոսի բանտարկեալը: 10 Կ'աղաչեմ քեզի զաւակիս՝ Ոնեսիմոսի համար, որ ծնայ իմ կապերու մէջ: 11 Ան ժամանակին անպէտ էր քեզի. իսկ հիմա պիտանի է թէ՛ քեզի, թէ՛ ինծի: 12 Ետ ղրկեցի զայն քեզի. իսկ դուն ընդունէ՛ զինք իբր իմ սիրտս: 13 Կ'ուզէի իմ քովս պահել զայն, որպէսզի քու կողմէն սպասարկէ ինծի՝ աւետարանի կապերուն մէջ. 14 բայց ուզեցի ոչինչ ընել առանց քու կարծիքիդ, որպէսզի քու բարիքդ չըլլայ որպէս թէ հարկադրաբար, հապա՝ ըլլայ կամովին: 15 Թերեւս ան ժամանակ մը զատուեցաւ, որպէսզի յաւիտեան ունենաս զինք. 16 ա՛յ ո՛չ թէ ստրուկի մը պէս, հապա ստրուկէ մը գերիվեր՝ սիրելի եղբօր մը պէս: Ու եթէ սիրելի է մա՛նաւանդ ինծի, ո՛րչափ աւելի պիտի ըլլայ քեզի՝ թէ՛ մարմինի համեմատ, թէ՛ ալ Տէրոջմով: 17 Ուրեմն եթէ զիս հաղորդակից «կը նկատես»՝ քեզի, ընդունէ՛ զայն՝ որպէս թէ զիս: 18 Ու եթէ անհրաւած է քեզ կամ պարտք մը ունի, անցո՛ւր զայն իմ հաշիւիս: 19 Ես՝ Պօղոս՝ գրեցի իմ ձեռքովս. ես կը վճարեմ, որ չըսեմ քեզի թէ դո՛ւն ալ՝ դուն քեզ կը պարտիս ինծի: 20 Այո՛, եղբայր, քեզմէ այս օգուտը թող ունենամ Տէրոջմով. հանգստացո՛ւր իմ սիրտս ՊՏէրոջմով: 21 Վստահելով հնազանդութեանդ՝ գրեցի քեզի, քանի որ գիտեմ թէ ըսածես ա՛յ աւելի պիտի ընես:

ՎԵՐՁԻՆ ԲԱՐԵԻՆԵՐ

22 Միաժամանակ ինծի ալ պատրաստէ հիւրանոց մը, որովհետեւ կը յուսամ թէ պիտի

<sup>ա</sup> Ոմանք՝ մեր

<sup>բ</sup> ԅուն.՝ ընդերքը

<sup>գ</sup> ԅուն.՝ ունիս

<sup>դ</sup> Ոմանք՝ Զրիստոսով

## ՊՕՂՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՓԻԼԻՄՈՆԻ

Չնորհուիմ ձեզի՝ ձեր աղօթքներուն միջոցով: **23** Կը բարեւէ քեզ Եպափրաս՝ գերութեան ընկերս Զրիստոս Յիսուսով. **24** **Ճաեւ** Մարկոս, Արիստարքոս, Դեմաս, Դուկաս՝ գործակիցներս: **25** Մեր Տէրոջ՝ Յիսուս Զրիստոսի Չնորհքը ձեր հոգիին հետ: Ամէն: